

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող առևտրային վարկերի լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի կիրառման դեպքում անվանական տոկոսադրույքի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$S_t = S_z + S_{\phi}, \text{ որտեղ}$$

S_t – Լողացող տոկոսադրույք,
 S_z – Լողացող տոկոսադրույքի հաստատուն բաղադրիչ՝ մարժա,
 S_{ϕ} – Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչ՝ շուկայական (հենանիշային) տոկոսադրույք,

Բանկը տարին երկու անգամ վերանայում է լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (S_{ϕ}) և այդ մասին տեղեկատվությունը ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը կարող է հրապարակել Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

Լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի կիրառման դեպքում յուրաքանչյուր վարկատեսակի պայմաններով կարող են սահմանվել անվանական տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն շեմեր, որոնցից ավել տոկոսադրույք չի կարող բարձրանալ կամ իջնել՝ անկախ հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների փոփոխության չափից:

Լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (S_{ϕ}), կախված վարկի արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

- **ՀՀ դրամով լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը:** ՀՀ պետական (զանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ <https://moneymarket.am/index.php?page=menuinfo&id1=1&id2=2&id3=5> հղմամբ ներկայացված տեղեկատվությունը: Եթե վերոնշյալ ցուցանիշի հրապարակումը հաջորդ ժամանակահատվածի համար ժամանակավորապես դադարեցվում է, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար հիմք է ընդունվում՝ <https://moneymarket.am/index.php?page=menuinfo&id1=1&id2=2&id3=5> հղմամբ հասանելի վերջին հրապարակված արժեքը:
- **ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքը (CME Term SOFR USD 6 Month):** ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող է հանդիսանալ <https://www.cmegroup.com/market-data/cme-group-benchmark-administration/term-sofr.html> հղմամբ ներկայացված տեղեկատվությունը: Եթե վերոնշյալ ցուցանիշի հրապարակումը հաջորդ ժամանակահատվածի համար ժամանակավորապես դադարեցվում է, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով <https://www.cmegroup.com/market-data/cme-group-benchmark-administration/term-sofr.html> հղմամբ հասանելի վերջին հրապարակված արժեքը:
- **Եվրոյով լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի հաշվարկման հիմք է հանդիսանում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքը (EMM EURIBOR 6 Month):** Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Եվրոպական Միջբանկային Առաջարկի տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ https://www.euribor-rates.eu/en/#google_vignette հղմամբ ներկայացված տեղեկատվությունը: Եթե վերոնշյալ ցուցանիշի հրապարակումը հաջորդ ժամանակահատվածի համար ժամանակավորապես դադարեցվում է, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով https://www.euribor-rates.eu/en/#google_vignette հղմամբ հասանելի վերջին հրապարակված արժեքը:

Եթե վերոնշյալ շուկայական տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է Բանկի դիրքորոշմամբ առաջնային բաղադրիչին փոխարինող/հաջորդող այլ բաղադրիչ:

Փոփոխուն բաղադրիչի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով նախորդ տարվա նոյեմբերի վերջի դրությամբ հրապարակված տոկոսադրույքների մեծությունները, իսկ օգոստոսի 1-ի համար Փոփոխուն բաղադրիչը հաշվարկվում է տվյալ տարվա մայիսի վերջի դրությամբ հրապարակված տոկոսադրույքների մեծությունները:

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի դեպքում տոկոսադրույքի սահմանված անփոփոխ ժամանակաշրջանի ավարտից հետո գործում է տվյալ պահին լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի տոկոսադրույքներն ըստ արժույթների և փոփոխուն բաղադրիչի առաջին փոփոխման ամսաթվին է տվյալ ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթիվը և յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի դեպքում տոկոսադրույքի սահմանված անփոփոխ ժամանակաշրջանի ավարտից հետո գործում է տվյալ պահին լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի տոկոսադրույքներն ըստ արժույթների և փոփոխուն բաղադրիչի առաջին փոփոխման ամսաթիվին է տվյալ ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթիվը և յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

Փոփոխություն բաղադրիչի մինչև 1 % փոփոխման դեպքում Բանկը կարող է որոշում կայացնել՝ չվերանայել հաջորդ ժամանակահատվածի համար փոփոխություն բաղադրիչի մեծությունը:

Փոփոխություն բաղադրիչի մեծությունը կորացվում է մինչև մեկ հարյուրերորդական նիշ ճշտությամբ:

Օրինակ՝ 7.233%-ը կդիտվի իբրև 7.23%, 8.252%-ը կդիտվի 8.25, 8.756%-ը՝ իբրև 8.76%, 8.768%-ը՝ իբրև 8.77%:

Փոփոխություն բաղադրիչը բացասական արժեք լինելու դեպքում Բանկի կողմից սահմանվում է նվազագույն շեմ:

Իրավաբանական անձ հաճախորդների համար գործող վարկատեսակների լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի հաստատուն բաղադրիչը կարող է վերանայվել ըստ անհրաժեշտության:

Լողացող կամ հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի կիրառման Փոփոխական բաղադրիչների արժեքները տեղադրվում են Բանկի պաշտոնական կայքում, և շահառու հաճախորդները համարվում են պատշաճ տեղեկացված և ծանուցված:

Փոփոխական բաղադրիչների արժեքները՝

Ամսաթիվ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
31/08/2026	6.72%	3.71%	2.55%